Ճապոնիա-ՄԱԶԾ համատեղ ծրագրերի բացման արարողությունները Արարատի և Արմավիրի մարզերում

2026 թվականի ապրիլի 29-ին Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն Առկի Յուտական ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ տիկին Նաթիա Նացվլիշվիլի հետ միասին այցելեց Արարատի և Արմավիրի մարզեր, որտեղ իրականացվում են Ճապոնիայի կառավարության և ՄԱԶԾ-ի միջև համատեղ ծրագրեր:

Արարատի մարզում գտնվող Ազատի ջրամբարը համալրվել է օդերևութաբանական և հիդրոլոգիական կայաններով, ինչպես նաև այլ ժամանակակից մոնիթորինգային սարքավորումներով՝ կլիմայական ռիսկերի դիմակայունությանն ուղղված ծրագրի շրջանակում (1 միլիոն ԱՄՆ դոլար)՝ ռիսկերի կառավարումն ու կլիմայական դիմակայունությունը ամրապնդելու նպատակով: Այս ծրագիրը անմիջականորեն աջակցում է մոտ 167,000 տեղի բնակիչների: Միևնույն ժամանակ, այն նպաստում է բնակիչների անվտանգության բարձրացմանը՝ բարելավելով վաղ նախազգուշացման համակարգերը և ավելի հուսալի դարձնելով եղանակային կանխատեսումները:

Արարատի և Արմավիրի մարզերում անցկացված հաջորդ երկու արարողությունները իրականացվել են «Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց և հյուրընկալող համայնքներին աջակցության» ծրագրի շրջանակում (3 միլիոն ԱՄՆ դոլար): Արարատի մարզի Մասիս համայնքի Զորակ բնակավայրում բացվել է բազմաֆունկցիոնալ համայնքային կենտրոն՝ ավելի քան 1100 տեղացի բնակիչների կարիքները հոգալու նպատակով, որոնց գրեթե կեսը տեղահանվածներ են: Կենտրոնը մաս է կազմում ավելի լայն նախաձեռնության, որն ընդգրկում է հինգ համայնք և աջակցում է շուրջ 126000 մարդու՝ ապահովելով ներառական ծառայություններ, ուսուցման հնարավորություններ և սոցիալական աջակցություն խոցելի խմբերի համար: Արմավիրի մարզի Հայթաղ բնակավայրում վերանորոգվել են ամբուլատորիան և ապաստարանը: Ամբուլատորիան համալրվել է ժամանակակից բժշկական սարքավորումներով և արևային էներգիայով աշխատող համակարգերով: Այն այժմ սպասարկում է 2740 բնակչի, այդ թվում՝ 60 տեղահանված անձանց և 70 հաշմանդամություն ունեցող մարդկանց:

Իր ելույթում դեսպան Առկին ընդգծեց, որ տեղահանված անձանց և նրանց ընդունող համայնքներին աջակցելը չափազանց կարևոր է: Նա վերահաստատեց Ճապոնիայի կառավարության հանձնառությունը՝ շարունակելու համագործակցությունը ՄԱԶԾ-ի և Հայաստանի կառավարության հետ՝ դժվարին իրավիճակներում գտնվող մարդկանց օգնելու համար:

Դեսպան Առկիի ելույթը

Կարմիր ժապավենի կտրումը

Զորակի հանրային տարածքը

Պարային կատարում Զորակում

Հայթաղի վերանորոգված ամբուլատորիան

Պարային կատարում Հայթաղում

Զորակի նոր հանրային տարածքը

Ծրագրի վահանակը Ազատի ջրամբարում